4993
հայերեն

U.

12004

373
U-97
646-ԱՀ

# ԿԱՐԳ ԵՒ ԿԱՆՈՆՔ

ՍՈՒՐԲ Մ՛ՆԴՈՒԽՏ ԴՊՐՈՑԻ

ՕՐԻՈՐԴԱՑ ԵՒ ՊԱՐՈՆԿԱՑ։

ԲԱՑԵԱԼ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1847

Ի ԿԱԼԿԱԹԱ

ԸՍՏ

## ԱՌԱՋԻ՛Ն ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎՈՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ԿԱԼԿԱԹԱ

1847

148

4993-որ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

41858-68

ՊԱՏՈՒԵԼԻ՛ ԾՆՈՂՔ

Ամէն օր մին դէպ չէր անցնի այնի , և որքան ալ . յետոյ , այնպէս , և այլ արտաքին չափազանցու- թեան թան՝ մենք և փնտրենք թէ արդեօք այն ինչ է խորհուրդ , որ " ՅՈՒՍԱՏԵՆԱԿԱՆ " առաջնելոյ արձա- նիայ ,— իւր ալ.ի ամենապայծառ և սուր փնտրա- թիւ՞նն , իւր դիմաց մերսանութիւ՞նն , թէ իւր բաղկաց ո՞վն . որ թո՛ղ թէ չար գաղտնի մար- դոյմ , ան թէ յանդգնաբար կողմնակ մէջում , սակայն և այնպէս՝ դէպ փակել է ,— եթէ արդ և ապա նման անոր բանէր պէտք յաւիտենական առաքին , առաջին յաւիտենական բանի նշանակութիւնն դէպ չէնք համոզել .

Յաւիտենականն — Պարծի՛ք , նշանակութեամբ որով մէն անվերջանալի փոխադարձութեան , անվախճա՛ն կեանք , կամ անմահ ապրել . որ Աստուծոյ է վայելուչ , որովհետև Աստուած Հոգիայ ,— Բա՛ .

մարդոյ։—Մա՛րդն ես հոգւոյ, մարդն ես կենդանի հոգւոյ, մարդն ես Աստուծոյ հոգւոյ, եւ հէ՛նց է հոգածուոյ իւր Արարչի նման. եւ հէ՛նց է հոգւով պէտք Աստուծոյ հետ՝ եւ Աստուածամ տքէ. յաւիտենակա՛ն լինի, անմա՛հ կայ։—Երկար ապրելն երջանկութիւն չէ՛։—Յաւիտենականութիւնն՝ եթէ Աստուծոյ նման կատարելութիւնս ունենայ՝ անվերջանալի թշուառութեանց անե-ցուցին։ Եւ դու՛ ծնո՛ղ առաջի Աստուծոյ պարտական ես յեր մարդ գերմակաց անմահ հոգւոյն ճայն տանել։ Գիտէ՞ք, որ թէպէտ մեզն կորզելոյ մեր մտքէ Աստուածային գաղափար-ներն, սակայն Աստուծոյ շնորհօք եւ յայտնութեան միջոցս տուեալ մեզ կրկին ստանալոյ զայն։ Ընկա՞լ, պէտք ասէ, հաստատե՞լ։—Ընդունիմ, որ հաստատել կարողանայ Աստուծոյ շնորհօք, բայց Աստուածային ամենամայ, թէ "Հաւատն սուրբ կենդանի։" Եւ ինչ՞ է կործանմ, յեր մանրանքն, այս հեռաւոր աշխարհում, այս հեթանոսաց մէջում եւ գրքերում, այս խաւարի խաւարն կապառներ եւ անհաստատուածներ ամբողջութեան եւ անսանձութեան ստանա՞լ պէտք լսեն Աստուծոյ Հաւատոյն։ Մի՛ խաբիք։—Կարելի բան չէ։

Հաւատոյն լսելոյ կենի, եւ հաւատ լսելոյ տեղն պէտք նոր աշէ ԴՊՐՈՑՆ լինի, եւ այդ աշէ ԵԿԵՂԵՑԻՆ։ 'Ի սոյնէ արտաքոյ հաւատ լսելոյ տեղ չկայ, եւ Աստուած առանց փրկագէտ իւր

շնորհօն չէ փոխէց, ասասմա՛ց Մեծն Խոսրով եղեւ-
խղանն։ — Որդեա՛կ, եթէ յէր ըննօն այս քանի
համարայ, որ յէր ղառակայ հոգին գիտութեամբ
լուսաւորէք, եւ նոյն լուսաւորեալ հոգւոյն յաւի-
տեան երջանիկ առնելոյ ճանապարհն ցիտակէք եւ
համառօտէք, եթէ յէր դիտօն էնայ՝ որ մեր ամուր
համափն, որդէս որ մինչ ՚ի մեզ համնելոյ, նոյն
անարատութեամբ հաշտարէք յէր գերմականաց,
եթէ յէր տիրուհայ որ մեր ազգի Առտաածաբօ-
եղօսն անարատ պահէք, եւ նորանով մեր Երանելի
Նախնեաց վաստակն յէր գերմականաց համար օգտա-
ւոէք. ազգի տղրայ ղարտարելով, եւ այս հեռա-
ւոր ականհաւս ազգի պարծանք յաւելայանելով՝
ուրեմ՝ ալ քայէ՛ք, տեղ ՚ի յերկինն ակնեյէ՛ք,
եւ յէր ոսրաի իղձհանօն կենայէ յեղ, որ այս յէր
որարօն Առտաածահաճոյ քանայ, եւ իւր վարյօն
չի կանենայ։

՚Ի տանի այսց հետէ էր՝ որ մեր Ազգի Օէոր-
տայ Գրատփարակութեան տարաբեւ էր, եւ գեր-
մակ մանկանց համար մեծ ձեռաբանօն պատւա-
ճառոր փեղիք լեին. Ներկայ աղօրմաութեամբն
Առտաածայ ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒԽՏ ԴՊՐՈՑՍ քայա-
ղայս, թէ վասն Հայերէն, եւ թէ վասն Անգղիարէն
ասամանց, անդուլ հետեւողութեամբ եւ ճաոաւր
ննդեամբ. Եւ յեղ եւ ամենայն աղգաիրայ աղաւա-
ւան ժամ. Իւրաաայ՝ գլուխ գաւառայ լոսնի նա,
այս Առտաածայ յաջողութեան վերայայ հաստատ,

և իւր ըմպից և աշխատութեանց ․ ՚ի վերնական խորհրդոյ ասնի պայծ վարդապետութեան ․ որ՝ Հայ , և որ՝ Անգղիացի , և ՚ի Ներքնական խորհուրդ՝ շերխոս-վարժապետս , Նորին պէս որ՝ Հայ , և որ՝ Անգղիացի ․ ով խաղ ի՞ր զերթեայ ։

Վստահութեամբ յորդորին ամենայն Պատուելի Շնոր-հեան նպաստիւ մատուցանել Մարդ Հայաստա-նութեան ասյորն՝ աշխարհի բազմութեամբ եւ-րեանց ․ և մեք խոստանամք ՚ի ըմպից ո՞ւ պակասել ամենայն ... ՚ի շարժալոյ շնորհաց ՚ի շնորհ-Աստուածաշնչական գանձեց նոյն

Անկեղծ ալիւանութեամբ

խոնարհ՝ ծառայ

Մ․ Դ․ ԹԱՂԻԴԵԱՆՑ

ԸՍՏ

ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՈՑ

՚Ի 5 Ապրիլի 1847

Եւ Ըստ

ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎՈՑ

՚Ի 28 Յունիսի 1847

ՀԵՏԱԳԱՅ ԿԱՐԳ ԵՒ ԿԱՆՈՆՔ

ՀԱՍՏԱՏԵՑԱՆ

ՎԱՍՆ

ԴՊՐՈՑԻ ՍՐԲՈՑՆ ՍԱՆԴԽՏՈՑ

---

## ԾԱՆՕԹ.

ՈՐՈՎՀԵՏԵՒ համեմատ մծոյ Առաջին Ժողովոյն՝ որոշումն վարձուց վասն միոյ լեզուի՝ չորս, և երկուց լեզուաց՝ մէկ ռուփի էր՝ ցփոխել ամեն ի մեծագոյն և ընդարձակ. յոր արդէն իսկ փոխեալ է. Երկրորդ Ժո-

ղո՛ն յետ քաղում վերահասութեան և կշռադատութեան հաստատեաց խորաքաշխուր աշակերտի ամսական ՈՒԽԹ՛Ն Կ. Ոսուփիս վարժ, զի բաւական լիցի կատարութեան Դպրոցի Սրբոյն Սանդխտայ վարձել զՆոդղէուհի ուսուցիչ ոք ։

Յառաջադրեցաւ զի անցքն ներկայացուցին միւս աններկայ Օգնողաց և Պաշտպանաց Աշակերտաց, և ընդունեցին զհաւանութիւն նոցա ևս, որպէս և եղեն իսկ ։

—◆—

## ԿԱՆՈՆՔ ԴՊՐՈՑԻՆ

1. Ի ՄԱՐՏԻ սկզբանէն մինչև ցՀոկտեմբերի վերջն՝ սկսանի զդասատուութիւնն յինն ժամէ առաւօտուն և տևէ ցերկու ժամն միջօրէի, Եւ ի

սկզբանէն Հոկտեմբերի ցվեր-
ջըն Փետրվարի՝ սկսանի
յինն և 'ի կէս ժամէ առա-
ւօտուն, և աւարտի յերկու
և կէս ժամու զկնի միջօրէի.

2. Սկսանի դպրոցն ընթեռնլով
նախ զմի գլուխ 'ի Սուրբ Գրոց,
բացատրելով զիմաստ նորին
յաշխարհիկ լեզու, և աղօ-
թիւք.

3. Պահի 'ի Դպրոցին յիշատա-
կարգութիւն վասն երթևեկի
աշակերտացն, յորում նշա-
նակին անուն, հասակ և թիւ
ամսից և ելից նոցա.

4. Պահեսցի ընդհանրական ցու-
ցակ մի օրական աններկայու-
թեանց աշակերտացն 'ի Դպրո-
ցին՝ խորանագիծ ձևով, յո-
րում յիշատակեսցի անուն և

օրաթիւ աններկայացեալ աշա-
կերտացն ։

5. Ամենայն աշակերտ յիններորդ ժամու առաւօտեան՝ անյապաղ պարտ է լինել ի տեղւոջ աստիճանի դասուն իւրոյ ։

6. Ի մտանել Առաջին Վարժապետին ի դպրոցն, և ընդ հնչեցուցանել անդ զանգակի դպրոցին՝ ամենայն աշակերտ պարտի կանգնել յոտն, և բաց գլխով աղօթակից լինել Տէրունական աղօթիցն, (այն է՝ Հայր մեր.) զոր քաղցր և ծանր ձայնիւ ասէ կամ երգէ։

7. Յաւարտել աղօթիցն՝ իբրև յետ տասն րոպէից՝ դասն առաջին պարտ է գալ ի դասատուութիւն։ Յետ դասուն առաջնոյ, ապա հետևեալ

դասքն մի զհետ միւսոյն ի
դասատուութիւն եկեսցեն,
իւրաքանչիւրոք առ նշանա-
ւորեալ դասատու իւրեանց.

8. Ի 12 ժամուն ի ձայն զան-
գակին՝ յոտն կացցեն աշա-
կերտք, եւ ապա արձակեսցին
գնալ յուտել զմիրգս իւրեանց
ցքառորդ մի ժամու եւ ոչ աւելի.

9. Յերկրորդ ժամուն՝ յետ մի-
ջօրէից՝ պարտին ամենայն օ-
րական աշակերտք թողուլ
զդպրոցն.

## ՎԱՐԺԱՊԵՏՔ

10. ՄԵՍՐՈՎԲ Պաւթեան Խա-
զիզեանց Առաջին Վարժա-
պետ երկուց լեզուաց եւ Թարգ-
մանութեանց, թէ մանկանց
եւ թէ օրիորդաց.

11. Պարոն Երկրորդ Մարժապետ Անգղիականին,

Տիկին Մ. Պ. Թաղիեանց՝ Առաջին Մարժապետուհի Հայ ուսման, ասղի և կարի.

Անգղիացի Առաջին Մարժապետուհի Անգղիական բարբառոյ՝ և ասղի և կարի.

12. Առաջին Մարժապետին պարտ է յառաւօտուց 'ներկայանալ 'ի դպրոցն, և հրահանգել զաշակերտսն անխնայ և կատարեալ կրթութեամբ յար-

ուխտս և 'ի մարս առաքի-
նութեանց ։

13. Առաջին Մարժապետին պարտ
է՝ ըստ յընդհանրական վերա-
հասուեց վարուց և ուսմանց
աշակերտացն, զի թէ երկիցս կամ՝
երիցս յիւրաքանչիւր եօթնե-
կի անձամբ վերահասու լինել
բոլոր դասուց աշակերտացն ե-
ղելոց ընդ կառավարութե դասա-
տուացն՝ առ 'ի գիտել զպարա-
գայս յառաջադիմութեն ուսմանց
նոցին, և թէ արդեօք վարեա՞լ
իցեն ըստ կանոնաց դաստիարա-
կութեանց՝ սահմանելոց յիւրմէ
առ ամբառնալոյ զնոսա 'ի վե-
րագոյն դաս, թէ ոչ ։

14. Պարկեշտ լիցի ընթրան մարժա-
պետաց և մարժապետուհեաց ։

## ԴԱՍԱՏՈՒՔ

15. ԴԱՍԱՏՈՒՔ կամ երկրորդական վարժապետք նոյնպէս պարտին ունել զվարս բարիս և զգիտութիւնս բաւական պաշտամանց իւրեանց վկայականօք ։ Ընտրութիւն սոցա կախի զԱռաջին Վարժապետէ Դպրոցիս · որ ընտրեսցէ զընտիրն ուսմամբ՝ և վարուք առաքինականօք ։

16. Դասատուացն պարտ է յիններորդ ժամու առաւօտեան անյապաղ ներկայանալ ի դպրոցին , և զամենայն զջանս իւրեանց ի գործ արկանել ՚ի կրթութիւն աշակերտացն իւրեանց յանձնեցելոց · ըստ կանոնայն սահմանադրելոց ։

17․ Պաստառ այն պարտ է ի միջօրէական արձակութեան աշակերտացն մնալ ի դպրոցին ։ Բայց ի լինել անհրաժեշտ իմն հարկի վասն գնալոյ ի տուն, պարտին առնուլ զհրաման ի ա վարժապետէն, որպէս և վասն անհրաժեշտ ինչ հարկի չներկայանալոյ․ զոր օրինակ, հիւանդութեանց և անակնկալ ինչ պատահմանց ․ զորս պարտ են վաղագոյն թղթով կամ բանիւ ազդ առնել վարժապետին ։

18․ Պաստառուայն պարտ է ի միջօրէական և ի պատահական աններկայութեան վարժապետին, ի ծագիլ շփոթութեանց և կռուոց ի մէջ աշակերտաց՝ իսկոյն սաստել և խաղաղել

գայնս, և զանուանս այն-
պիսեացն գրել, ծանուցանել
վարժապետին ՚ի քննութիւն,
՚ի խրատ և ՚ի պատիժ. որ-
պէս և ՚ի ներկայումն նորա իսկ՝
՚ի պատահելն աղմկաց և բարձ-
րագոյն ինչ ձայնից ՚ի մէջ
փոքրագոյն և հեռանիստ ա-
շակերտացն, իսկ և իսկ խա-
ղաղել զնոսա. և ՚ի յամառելն
նոցա՝ ածել զնոսա առ վար-
ժապետն ՚ի պատուհաս.

19. Դասատուացն պարտ է փոփո-
խակի ընդ ժամս ժամս շրջել
ընդ Դասակարգութիւնս ա-
շակերտացն փոքրագունից՝ ՚ի
վերահասութիւն ընթերցմանց
և վարուց նոցա.

## ՕՐԱԿԱՆ ԱՂԱԿԵՐՏԱՑ

20. ՄԱՆՈՒԿ կամ օրիորդ ՚ի չորսամենից ՚ի խոնարհ՝ ոչ է ստանալի ՚ի Դպրոցս ։

21. Օրիորդք յամենայն հասակի ընկալցին, եթէ ՚ի վարս բարիս կրթիլ կամիցին ։

22. Ամենայն ծնողք կամ վերակացուք մանկանց, պարտին ինքնին անձամբ բերել զմանուկն ՚ի Դպրոցս. և կամ թըղթով առաքել ՚ի ձեռս վարժապետին, ծանուցանելով ըզ Հասակ մանկանն ։

23. Ամենայն ծնողք՝ կամ վերակացուք մանկանց՝ պարտին յամենայն աւուր (բաց ՚ի Կիւրակէից և ՚ի սահմանադրեալ աւուրց Արձակութեանց) ա-

առաքել զմանկունս ՚ի Դպրոցն ,
և ՚ի դիպիլ անհրաժեշտ իմն
արգելման , զոր օրինակ՝ հի-
ւանդութեանց և անձնական
պատահմանց՝ պարտին ազդ
առնել Վարժապետին զատոյգ
բնութիւն և զպատճառ ար-
գելմանցն՝ բանիւ կամ թըղ-
թով .

24. ՚Ի ստիպիլ անհրաժեշտ իմն
հարկի առ ՚ի հանել զաշա-
կերտսն ՚ի Դպրոցէս՝ ծնող կամ
վերակացու մանկանն պարտ է
ազդ առնել Վարժապետին
թղթով զպատճառն ստուգա-
պէս , առ ՚ի բառնալ զանուն
աշակերտին այնորիկ ՚ի յիշա-
տակագրութենէ դպրոցին , և
զթիւ ելից նորա առնուլ .

25. Ամենայն ծնօղք՝ կամ վերա-

կացուք մանկանն՝ որք կամի-
ցին զմանկունս իւրեանց մու-
ծանել ՚ի դպրոցս , եթէ չըն-
դունիցին և կամ չպահիցեն
զամենայն զարտաքին կանոնս
դաշնադրութեանց սորա՝ չէ
պարտ և օրէն ստանալ զման-
կունս նոցա ՚ի դպրոցս , զի
մի լինիցին առիթ անկարգու-
թեանց միւսոցն , և վատա-
համբաւութիւն Դպրոցիս ,

## ԲՆԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ

26. Պահանջին վարք ամենեցին
զուսպ, պարկեշտ , և մաքուր.
27. Պահանջի * 16 Ոսկի վասն
միոյ մահճի. և վեց Ոսկի

☞ Տե՛ս ՚ի Գլուխն Վարձուց

տարեկան՝ վասն փռուածոյ նորա, բայց ՚ի Հասարակ վարձուցն։

28. Ամենեքին ՚ի սեղան Վարժապետին կերակրին, և յամենայնի վարուց և ծխոյ պարտին միտ դնել։

29. Ծնողք պարտին Համեմատ այսր դրութեան բաւական պիտոյս Հանդերձից և այլոց կարեւորաց Հոգալ, որպէս զի արժանի լիցին երեւելի ընկերակցութեան մայրաքաղաքիս այսորիկ։

30. Բնակ աշակերտ պարտի զարժէս տարեկան գրոց և այլոց պիտանեաց յառաջագոյն Հատուցանել։

31. Բնակ Օրիորդ ՚ի Վերնատան բնակի. կամ յառանձին սենեկի

իւրում, կամ ընդ աշակերտակից օրիորդաց ։

32. Ունիցի իւր յատուկ մահիճս և անկողինս կազմ և մաքուր միշտ ։

33. Երից Օրիորդաց մի միայն աղախին լիցի ՚ի դպրոցիս · (կարողքն կարեն և իւրեանց յատուկ աղախնեայս ունել, այլ ո՛չ կարեն բացարձակ հրամայել նոցա · զի մի փոխանակ հնազանդութեան՝ հրամայել ուսանիցին ։

34. Մանկունք ՚ի ներքնատան բընակեսցին անխառն յօրիորդաց ։

35. Ինակ Օրիորդք մի բնաւ առանց ապահովութեան կայցեն, յորժամ Վարժապետուհին արտաքս ՚ի տանէն

երանեցէ ։

56. Ի սեղան երթիցեն Օրիորդք զոյգ ընդ Վարժապետուհւոյն, և մանկունք զոյգ ընդ Վարժապետին ։

57. Յետ գոհութեան նախ Վարժապետուհին Օրիորդօքն մեկնեսցի 'ի սեղանոյ, և ապա Վարժապետն՝ մանկամբք ։

58. Ամենայն սուլիս, գիր, թուղթ, լուր, պատպարանք կամ ընծայ տալ, մի՛ ընդունիցին, առանց գիտութեան բոլոր ատենի կառավարութեան այսր դպրոցի ։

59. Եթէ՝ խոստունս ծնողաց և պաշտպանաց չիցէ, ոչ ոք կարէ միայն գնալ՝ առանց Վարժապետին կամ Վարժապետուհւոյն ։

## ԿԱՆՈՆՔ ՎԱՐՈՒՑ

40․ Մի՛ խածանեսցիս աշակերտաք ի գնալն, և մի՛ ինչ մռռասցիս ։

41․ Մանր Օրիորդաց կին սպա-սաւոր Հետևողք եկեղեցին․ կամ վարձ Հատուցի Հետևո-ղաց՝ եթէ մի միայն իցէ ՚ի միոյ տանէ, և Հասակն անբաւա-կան կառավարելոյ զինքն ։

42․ Իւրաքանչիւր զիւր պատուղ որիշ կերիցէ, այլ ՚ի միում սեղանի և ՚ի միում ժամա-նակի, ընդ անխարկութեամբ միոյ ՚ի դաստապետաց կամ դա-ստապետուհեաց ։

43․ Մի՛ ընաւ երկու ՚ի միասին երթիցեն ՚ի պէտս ինչ՝ եթէ ՚ի միոյ տանէ ոչ իցեն ։

44․ Մի՛ ոք զպարտիցէ զընկերն

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР

'ի տարապարտուց ։

45. Ո՞րչափ մաս աշակերտն որո-շեսցի 'ի դասուէն ։

46. Մի՛ բնաւ ներեսցի զրուց խօսս ասել ումեք 'ի դըպ-րոցի ։

47. Մի՛ բնաւ զրոյց կամ խօս լիցի արտաքոյ քան զբանս վերա-բերեալս դպրութեան իւ-րեանց ։

48. Ճառախօս և բանբեր աշա-կերտն արհամարհի ։

49. Որ զդպրոցի խօսս 'ի տան ասիցէ , յետ միանգամ և եր-կիցս ընկերոյ՝ պատժի ։

50. Մի՛ ոք զարդ զգեցեալ ե-կեսցէ 'ի դպրոցս , զի զարդ դպրոցի ուսումն է ։

51. Մի՛ ոք անօթ արծաթի , կամ ինչ մեծագին բերցէ ։

52․ Մ՛ի անմաքուր և խռուամազ եկեսցեն, այլ լուացեալ, յըս-տակեալ, սանտրեալ և ամե-նայն պարզով կա՛զմ՝ այլ պարկեշտ ։

53․ Յետ պտուղ ուտելոյ, կամ գիր գրելոյ զգուշասցին մաքրութեան ։

54․ Աշակերտուհիք կարին և նշա-նակարին միտ դիցեն յետ գրելոյ ։

55․ Աշակերտուհիք Թուաբանու-թեան միտ դիցեն յետ կա-րելոյ ։

## ԾՆՈՂՔ

56․ Մ՛ի զտան զանգատն ի վար-ժատուն առաքեսցեն ։

57․ Մ՛ի զվարժատան զանգատն՝

’ի տունս իւրեանց լուցեն.

58. Մ՛է սեռ միջնորդութեամբ բնաւ տաւլիս եղիցի յերկուց կողմանց եւս՝ այլ գրով ։

59. Ճ՛իշտ լիցին ’ի ժամ առաքելոյ զպտուղս զաւակաց իւրեանց , անխախտապէս ’ի 12 ժամուն, որպէս զի ամենեքին կարգաւ բաղձեալ ընդ վերակացութե մոյ ’ի դատապետաց եւ դա- սապետուհեաց՝ վայելեսցեն , տանանց ձեռն մեալոյ ’ի բաժին ընկերին ։

60. Որ ոչ մտ դնէ Ճշտութեան ժամուս՝ զրկէ զզաւակս իւր յօրական պտղոց ։ Օ՛ի ար- տաքոյ այնր ժամանակի , ոչ նորի ո եւ իցէ ծառայի ’ի ներ- քոյ դալ , եւ շփոթել զկարգ դպրոցիս ։

61. Պատրաստական կարօտութիւնք մանկանց յետ միանգամ լուր տալոյ վարժապետին գրով՝ ի ծնողաց անվրէպ կատարեսցին։

62. Ծնողք կամ պաշտպանք պար-տին ի տան իւրեանց հետե-ւել կերպի դաստիարակութեան դպրոցին, զի մի այլեայլու-թիւնն արհամարհութիւն ծը-նանիցի ի միտս աշակերտին։

63. Պիտի իւրեանք ձեռնամուխ լինիցին ի կերպն դաստիարա-կութեան նոցա. զի մի գուցէ փոխանակ շինելոյ՝ խանգարեսցեն զկարգն։

## ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ

64. Ա՛ն աշակերտք ամենայն բա-ժանեսցին ի դաս դաս՝ ու-

րոյն ու րոյն , սկսեալ ՚ի միոյ մինչև որքան և Տէր յաւելցէ , ՚ի մէջ վարժապետին և դասատուացն՝ ըստ պատշաճականութեանցն ,

65· Երկրորդ՝ պարտ է սահմանել ՚ի մէջ աւուրն ժամս ուրոյն վասն ուսմանց , կարգաւ յաջորդելով միմեանց անշփոթաբար · այսպէս

66· Դասատուութիւնք Այբենական ուսանողացն լիցին կատարեալ փողառութեամբ, յատակ արտասանութեամբ և ՚նշանակութեամբ , Ընդ անուան և ձևոյ տառից՝ մարզել պարտ է գնոսա և յանուանս , ՚ի ձևս , և ՚ի հնչմունս կիտից ,

67· Յետ աւարտման Այբենականին, պարտ է տալ գրչագրու-

թիւն. նախ զմեծագոյն խո-
շորագիրս գիւինս չափակցեալ
եռատողեան զծիւ, և ապա
տալ զբանս նոյնպէս խոշորա-
գրով, և ապա զգեղեցիկ ման-
րագիրս միշտ ուղղելով զթե-
րութիւնն։

68. Յաւուրս շաբաթուց պարտ է
տալ նոցա սերտել խուփ ըզ
Համառօտ Քրիստոնէական
Վարդապետութիւնս Հայաս-
տանեայց Սուրբ Եկեղեցւոյ՝
մինչև ցվերջն, մեկնելով զայն
ի լեզու ռամկական։

69. Յետ բաւականին Հասկանա-
լոյ զգրաբառն, տալ զՔե-
րականութիւնն. նախ՝ զՀոլո-
վել բառից, և ապա զմեկ-
նութիւնս նոյն բառիցն ռամ-
կօրէն. ըստ նմին և խելամտե-

ցուցանել զնոսա ՚ի մեկնութիւն
և ՚ի պարագայս հոլովոցն· յետ
հասանելոյ ՚ի խոնարհմունս
բայից՝ նոյնպէս մեկնել նոցա
զփոփոխութիւնս ժամանակաց,
եղանակաց, լծորդութեանց,
և այլոց պարագայից նոցին
՚ի ձև հարցմանց և պատաս-
խանեաց։ Իսկ զՍահմանադրու-
թիւնս զՇաղկապ, զՄակ-
բայ՝ և զՄիջարկութիւն գըր-
չութեամբ Օրինակաց։

70· Յետ աւարտման սոցին, զեր-
րորդ մասն՝ այսինքն զքննու-
թիւն մասանց բանի նորին՝
կատարելապէս խելամտեցու-
ցանել նոցա գրչութեամբ
օրինակաց և լուծմամբ։
Յետ քաջապէս ՚ի միտ առնը-
լոյ զմասունս բանին՝ դարձեալ

տալ սերտել զհամառօտու-
թիւն Քերականութեան · որ
է ՚ի վերջն քերականութեան ։
Առնել զհարցմունս զնոցանէ ,
և խնդրել զպատասխանի պէս-
պէս օրինակօք , և տալ ևս
գրել զայնս ՚ի վերայ թղթոյ ։
Եւ ապա տալ զհամաձայնու-
թիւնս մասանց Բանին լիա-
պէս և կատարելապէս , տալով
նոցա մեկնել զընթերցեալսն ,
յօրինել և տալ զօրինակս
յինքեանց , ըստ խրատուց
քերականութեանց · և յետ
ըստ բաւականին վարժելոյ
յայնս՝ տալ զբանս աշխարհա-
բառս յեղուլ ՚ի գրաբառն , և
զգրաբառն յաշխարհաբառս ·
և ապա տալ կազմել զբանս
յինքեանց , միշտ սրբագրե-

լով զխայլման , Հանդերձ իմացուցանելով նոցա զկանոնսըն , և այլն ։

Յետ ի կատար հասուցանելոյ զՔերականութիւնն, տալ նոցա ընթեռնուլ զՃարտասանութիւն , զՏրամաբանութիւն , և զուսումնական մատեանս , զգիրս քաղաքավարութեան , զդիւցազնական բանաստեղծութիւնս , զբարոյական իմաստասիրութիւն , զեկեղեցական և զքաղաքական Պատմութիւնս , և այլն . մեկնելով նոցա և վերլուծանելով զայնս քերականաբար ։

Շարագրութիւն ուսանելոյն ըստ կանոնաց Մեսրոպեան Շարագրչին ։

71· Ամենայն դաս առանց հասկա-

կացուցանելոյ մի՛ անցցէ ։

72. Նմանայն օր գրելս աշակերտաց տեսցեն, և նշանակեսցեն զօրն ։

73. Խուարանութիւն առօրին լիցի, և առանց տեսանելոյ, որոշելոյ և ձեռագրելոյ մի՛ անցցէ ։

74. Օրական հարցմունք զանցեալ ընթերցուածոց՝ անխափան լիցին ։

---

## ՈՒՍՄԱՆԵԼԻՔ

75. Մի՛ օր Հայերէն, և միւս՝ Անգղիարէն.

Տառագիտութիւն.
Հեգումն.
Բառագիտութիւն.
Ստուգաբանութիւն.
Գրչութիւն.
Թուաբանութիւն.

Առաջնորդ Մանկանց ·
Բարոյականք Զենոփիլեայ ·
Մեհրավրեան Շարադրիչ ·
Աշխարհագրութիւն ·
Աստղագիտութիւն ·
Քերականութիւն ·
Ճարտասանութիւն ·
Տրամաբանութիւն ·
Տարրալուծութիւն ·
Պատմութիւն Հայոց ·
Պատմութիւն Սուրբ գրոց, և նոյն իսկ
  Սուրբ Գիրք ·
Հրահանգ Քրիստոնէական Վարդապե-
  տութեան ·
Թարգմանութիւնք ի Հայէ յԱնգղ,
  և յԱնգղէ ի Հայ ·
Երաժշտութիւն ·
Կար, ձեւ, անկուած և ձեռակերտու-
  թիւն ·

76. Կարի, ձեւոյ, ասղագրի, աս-
դնէգործութեան, անկանելոյ
նիւթերոյ կամ գործերոյ ըղ
ձեռագործս՝ իբրև սեփհական
պաշտօնի իւրեանց մի դնել

պարտին վարժապետուհիք ։

77. Յերաժշտութեան և նուագածութեան աշակերտաց, որպէս և կաքաւուց և նկարուցն՝ որոշ վարձով միա դիցի ։ (արտաքոյ ծախուց ուսմանն նոցա)

---

ՊԱՏԻԺՔ

78. Յաւարտել դպրոցին՝ ամենայն Դաստիարակ պարտի տալ Ս. Վարժարանին զհամար աններկայ աշակերտաց դասուց ինքեան յանձնելոց, յիշատակագրելով ի ցուցակին աններկայութեան աշակերտացն։

79. Ամենայն զանցառօղ զնախագրեալ կարգադրութեամբքս՝ ունի պատժիլ որպէս և վարժապետն արժան դատիցէ ։

80. Ամենայն աշակերտ պարտ է 'ի սահմանադրեալ ժամուն ամենայն աւուր կարգաւ ներկայանալ. (բաց յաւուրց արձակութեանց) և պահել ըզ կանոնսն ։

81. Ամենայն աշակերտ 'ի սխալելն զդասս իւր՝ և 'ի չկարելն տալ զուղիղ պատասխանին հարցմանց Վարժապետին, 'ի դասակից աշակերտացն որ և՛ կարիցէ տալ զուղիղ պատասխանին, պարտ է մերժանալ 'ի տեղի նորա. և սխալելոյն 'ի վայր խոնարհիլ ։

82. Ամենայն աշակերտ 'ի կալն հակառակ կարգաց, կամ 'ի վարելն անպարկեշտ՝ նախ խրատի բանիւք, բազմապատիկ օրինակօք և ջանիւք. այլ

'ի յամառիլ աշակերտին 'ի
'նախնի մոլութիւնս իւր՝ և յոչ
դադարն յուղղութիւն՝ մերժի
'ի դպրոցէս , առ 'ի չտալ զօ-
րինակ մոլար վարուց աշակեր-
տակցաց իւրոց , և զվատա-
համբաւութիւն դպրոցիս ,

83. Որ ԾՈՒԼԱՆԱՅ 'ի գալ 'ի Դպրո-
ցն , պիտի այն աւուր դասն
բերան սերտել ,

84. Որ միանգամ սուտ ասէ , այլ
ևս հաւատալ չպիտի նմա ,

85. Որ զընկերն բամբասէ , կամ
զրպարտէ՝ յընկերաց զրկի ,

86. Որ զընկերն հարկանէ՝ պատժի
ըստ կամաց Վարժապետին ,
բայց ինքնին վրէժ չառնուցու-
բնաւ . այլ միայն յայտնեսցէ
վարժապետացն ,

## ԱՐՁԱԿՈՒԹԻՒՆՔ

87· Օրն ՚Նոր Տարւոյ ........ ..... 1
Ջրօրհնեաց ...................... 15
Բուն Բարեկենդանի ............ 1
Զատկին յԱւագ չորեքշաբաթէն. 8
Միւս երեք նաւակատեաց մի մի օր. 3
՚Ի տօնի ՚Ծննդեան Տեառն՝ ըստ
Անգղիացւոց ................. 1
ՅԱւագ ուրբաթու՝ ըստ Անգղիա-
ցւոց ........................ 1
՚Ի տօնի Արգաւրու Թագաւորին .. 1
՚Ի տօնի Լուսաւորչին մերոյ .... 1
՚Ի տօնի Սրբոյն Սանդխտոյ ...... 1

## ՎԱՐՁ

88· Օրական աշակերտի ամսական ուսման
երկուց լեզուաց՝ ............. 8
89· Բնակ աշակերտի՝ որոյ հասակն չիցէ
առաւել քան թէ ՚ի վեցէ մինչև
ցտասն ամ ................. 25
90· Բնակ Օրիորդին ՚ի տասնէ ց15 ամ 32
91· Բնակ Պարոնի ՚ի տասնէ ց20 ամ.. 32
92· Կիսաբնակ Օրիորդին ուսման և
ննջեան միանգամայն՝ ամսոյ .. 25
93· Կիսաբնակ Պարոնին ևս ..........20

94. Ընակ աշակերտ՝ եթէ իցէ ՚ի
մայրաքաղաքէ աստի՝ պար-
տի զվարձ իւր յամսոյ ամիս
վճարել . և զմահիճ և ըզ
հագուստ ընդ իւր բերել ։

95. Ընակ աշակերտ՝ որ յայլ քա-
ղաքէ իցէ՝ պարտի կամ զվեց-
ամսեայ վարձ իւր ՚նախաձեռն
հատուցանել , որպէս և զգին
մահճի 16 . և սաւանաց ՚նո-
րա 6 . և կամ ապահովել
զայն՝ ՚ի ձեռն Հայ վաճա-
ռատան ուրուք ՚ի Կալկաթա ։

96. Օրիորդին յԵկեղեցի գնալ
գալոյ ծախքն ՚ի ծնողաց կամ
՚ի պաշտպանաց վճարեսցին ։

97. Ծնող ոք կամ Պաշտպան
օրական կամ ընակ աշակերտի՝
որ ոչ վճարիցէ զմիոյ ամսոյ
վարձըն՝ ց15 երորդ միւսոյն ,

մի՛ ակնկալցի շարունակութեն զուակլին ի դպրոցի յայսմիկ ։

98. 'Ի վերայ գրեալ պայմանէ, որքան և յապաղեսցի հատու-ցումն՝ հարիւրին տասնևեր՝ կու վաշխ համարի ի վերայ, զոր չհատուցանօղք ինքնին պարտաւորին վճարել ։

---

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՔ

99. Տարեկան Հարցաքննութիւն հանդիսանայ 'ի 15 ամսեան Յունվարի ։

Իսկ առանձին հարցաքննու-թիւնք քառորդական լինին, այսինքն՝ յամսեան Ապրիլի, Յուլիսի և Հոկտեմբերի ։ Ու որ հրաւիրին ամենայն սի-րողք ազգային յառաջադիմու-թեան ։

# ԱԽՈԽՐԲ

ԲՇԱԲԱԹ. ԳՇԱԲԱԹ ԵՒ ՈՒՐԲԱԹ.

Ա. Դ.ԱՍ. Հեգել, թէ Հայերէն և
100. թէ Անգլիերէն. Օրական մի տուն գրուած հեգելով կարդալ. նշանակուի հաս-կանալ. գիր գրել. միրգ ուտել. քաղուկ առնել, համար կամ թուաբանու-թիւն սովորել. Օրական հարցմունք թէ Հայերէն և թէ Անգլիարէն.

Բ. Դ.ԱՍ. Բառ հեգել, նոյն և
101. նշանակութիւնն տալ. ըղ բառերն բարդել. Առաջ-նորդ մանկանց մի կամ եր-կու հատոր դաս տալ, միտքն առնել. ապա վման գրավարժութեան քանի տուն Սաղմոս կամ Աւե-

տարան կարդալ ․ Գ․իր գը-
րել ․ պտուղ ուտել ․ ապ-
բառից և առաջնորդ ման-
կանցէ քաղուկ առնել ․
օրական հարցմունք յեր-
կուսին լեզուս ես ,
Գ․ Դ․ ՇՍ․ Պիտի բառ հիգեն , զա-
102․ մենային քերականական պա-
րագայից մէջ առնուն , և
լուծանեն ․ Քերականու-
թիւն ուսանելն լուծմամբ ․
պատմութիւն Հայոց՝ մեկ-
նուէ ․ Օրական թարգմա-
նութիւն առնեն ․ Քերա-
կանական կանոնք գրեն ․
թուաբանութիւն առնեն ,
Նու շարադրութիւն հա-
մեմատ Մ՝եսրոպեան Հա
րագրչին Օրական Հարց ․

## ԱՆԳՂԻԵՐԷՆ

Ա. ԴԱՍ. Այբբենական Աւետարան
105. Ա. Թիւ Անգղիական Ըն-
թերցուած և Թուաբա-
նութիւն ։

Բ. ԴԱՍ. Անգղիարէն Քերակա-
նութիւն լուծմամբ. Աշ-
խարհագրութիւն ցուց-
մամբ, Պատմութիւն Հռ-
ովմայ և այլն, Թարգ-
մանութ̃ . շարադրութիւն
համեմատ կանոնաց Մես-
րոպեան Շարադրչի .

---

## ՇԱԲԱԹ

104. Մի օր Հայ՝ մի օր Անգ-
ղիարէն, Աղօթք . Սուրբ
Գրոց մի գլուխ մեկնութ̃ ,
Քրիստոնէական վարդա-

պետութիւն, Հարցմունք և արձակութիւն։

---

## ՎԵՐՋԱԲԱՆ

Առաջադրեցաւ հրատարակել առ այժմ զայսչափս միայն՝ ի ծանօթութիւն Պատուելի Հասարակութեան մերոյ, և խնդրել զի թէ ոք բարեհաճեսցի զայլ ևս օգտակար խորհուրդս ինչ կամ տնօրէնութիւնս մուծանել յայս դպրոց՝ շնորհ արասցէ կամ գրել, և կամ անձամբ պատուհել և հաղորդել կառավարութեան դպրոցիս։

ԳՐԱԴԱՐԱՆ ЗUUՌ-Арм.ССР ... им. А. Мясникяна ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.